



S9BY8142-06 (hy)
Փետրվար 2021
(Թարգմանված՝ Ապրիլ 2021)



Շահագործման ու սպասարկման ձեռնարկ

**Product Link - PL121, PL321, PL522 և
PL523**

Անվտանգության վերաբերյալ կարևոր տեղեկություններ

Արտադրանքի շահագործման, սպասարկման ու վերանորոգման ժամանակ տեղի ունեցող պատահարների մեծ մասի պատճառն անվտանգության տարրական կանոնների կամ նախազգուշական միջոցների անտեսումն է: Հաճախ պատահարներից կարելի է խուսափել՝ վաղորոք ճանաչելով հավանական վտանգ պարունակող իրավիճակները: Անհրաժեշտ է զգոն լինել հավանական վտանգների նկատմամբ՝ հաշվի առնելով նաև անվտանգության վրա ազդող մարդկային գործոնները: Այդ գործառնությունները պատշաճ իրականացնելու համար տվյալ անձը պետք է ունենա նաև անհրաժեշտ պատրաստվածություն, հմտություններ ու գործիքներ:

Այս արտադրանքի սխալ շահագործումը, յուղումը, սպասարկումը կամ վերանորոգումը վտանգավոր է և կարող է հանգեցնել մարմնական վնասվածքի կամ մահվան:

Ձեռնպահ մնացեք մեքենայի գործարկումից և ցանկացած յուղման, սպասարկման կամ վերանորոգման աշխատանքներից, քանի դեռ չեք հավաստիացել, որ իրավասու եք այդ անելու, և որ ընթերցել ու յուրացրել եք շահագործման, յուղման, սպասարկման ու վերանորոգման մասին տեղեկությունները:

Այս ձեռնարկում և արտադրանքի վրա առկա են անվտանգության ցուցումներ ու նախազգուշացումներ: Վտանգի մասին նախազգուշացումներն անտեսելը կարող է հանգեցնել Ձեզ կամ այլ անձանց մարմնական վնասվածքի հասցման կամ մահվան:

Վտանգները նշված են «Վտանգի մասին զգուշացման խորհրդանիշով», որին հետևում է «Նշանաբառը», օրինակ՝ «DANGER» («ՎՏԱՆԳ»), «WARNING» («ՉԳՈՒՇԱՑՈՒՄ») կամ «CAUTION» («ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ»): Վտանգի մասին զգուշացնող «WARNING» («ՉԳՈՒՇԱՑՈՒՄ») պիտակը ցուցադրված է ստորև:



Այս զգուշացնող նշանի իմաստը հետևյալն է.

Ուշադրություն: Չզուշացե՛ք: Խնդիրը Ձեր անվտանգությունն է:

Չզուշացման տակ առկա է լինում վտանգը պարզաբանող ուղերձ, որը կարող է լինել գրավոր կամ պատկերային:

Արտադրանքի վնասման հավանական պատճառ հանդիսացող գործողությունների սահմանափակ ցանկը արտադրանքի վրա և այս հրապարակման մեջ նույնականացված է “NOTICE” (ԾԱՆՈՒՑՈՒՄ) պիտակով:

Caterpillar -ն անկարող է կանխագուշակել հավանական վտանգ պարունակող բոլոր հնարավոր հանգամանքները: Հետևաբար, բոլոր նախազգուշացումները չեն, որ ընդգրկված են այս հրապարակման մեջ և արտադրանքի վրա: Այս արտադրանքը չի կարելի օգտագործել այս ձեռնարկում նկարագրվածից բացի որևէ այլ եղանակով, եթե վստահ չեք, որ հաշվի եք առել անվտանգության այն բոլոր կանոնները և նախազգուշական միջոցները, որոնք վերաբերում են համապատասխան վայրում արտադրանքի շահագործմանը, այդ թվում տվյալ տեղանքին առնչվող կանոններն ու նախազգուշական միջոցները: Caterpillar -ի կողմից հատուկ չնախատեսված գործիք, ընթացակարգ կամ շահագործման եղանակ կիրառելու դեպքում նախ հավաստիացեք, որ դա անվտանգ կլինի Ձեզ և այլոց համար: Անհրաժեշտ է հավաստիանալ, որ Դուք իրավասու եք կատարելու տվյալ աշխատանքը, և որ արտադրանքը չի վնասվի կամ դրա շահագործումը վտանգավոր չի դառնա Ձեր նախատեսած շահագործման, յուղման, սպասարկման կամ վերանորոգման ընթացակարգի արդյունքում:

Այս հրապարակման մեջ առկա տեղեկությունները, բնութագրերն ու պատկերները հիմնված են այն տեղեկությունների վրա, որոնք մատչելի են եղել դրա ստեղծման պահին: Բնութագրերը, պատուհի մոմենտները, ճնշումները, չափերը, կարգավորումները, պատկերները և այլ տվյալներ կարող են փոփոխվել ցանկացած ժամանակ: Այդ փոփոխությունները կարող են ազդել արտադրանքի սպասարկման վրա: Նախքան ցանկացած աշխատանք սկսելը ստացեք ամբողջական ու առավել արդիական տեղեկություններ: Cat -ի ներկայացուցիչները տիրապետում են հնարավոր ամենաարդիական տեղեկություններին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Այս արտադրանքի պահեստամասերի կարիք առաջանալու դեպքում Caterpillar-ը խորհուրդ է տալիս օգտագործել բնօրինակ Caterpillar® պահեստամասեր:

Այլ մասերը կարող են չհամապատասխանել բնօրինակ սարքավորումների որոշ բնութագրերին:

Պահեստամասերի տեղադրման դեպքում մեքենայի սեփականատերը/օգտվողը պետք է հավաստիանա, որ մեքենան շարունակում է համապատասխանել բոլոր կիրառելի պահանջներին :

Միացյալ Նահանգներում արտանետումների վերահսկման սարքավորումների ու համակարգերի սպասարկումը, փոխարինումը կամ վերանորոգումը կարող է իրականացվել ցանկացած վերանորոգման կետի կամ անհատի կողմից՝ սեփականատիրոջ հայեցողությամբ:

Բովանդակություն

Նախաբան 5

Անվտանգության բաժին

Անվտանգության նշաններ և պիտակներ 6

Ընդհանուր տեղեկություններ վտանգների
մասին 7

Կանոնակարգային համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ

Ռադիոհաճախականային բաղադրիչներ 8

Շահագործման բաժին

Շահագործում 14

Այբբենական ցանկի բաժին

Այբբենական ցանկ 16

Նախաբան

Տեղեկատու գրականություն

Սույն ձեռնարկը պետք է պահպանվի մեքենավարի խցիկում՝ գրապանակում կամ նստոցի հետնամասում գտնվող գրապահոցում:

Այս ձեռնարկը պարունակում է անվտանգության վերաբերյալ տեղեկություններ, շահագործման վերաբերյալ ցուցումներ և սպասարկման վերաբերյալ խորհուրդներ:

Այս հրատարակության առկա որոշ լուսանկարներում կամ պատկերներում ցուցադրված մասերը կամ կցորդները կարող են տարբերվել Ձեր մեքենայի ունեցածից:

Արտադրանքի դիզայնի շարունակական բարելավման ու արդիականացման պատճառով Ձեր մեքենան կարող է ենթարկված լինել սույն հրատարակությունում չներառված փոփոխությունների: Ընթերցեք, ուսումնասիրեք և պահպանեք այս ձեռնարկը մեքենայում:

Ձեր մեքենայի կամ այս հրատարակման վերաբերյալ հարցեր ծագելու դեպքում խնդրում ենք կապվել Cat-ի տեղական ներկայացուցչի հետ՝ առկա ամենավերջին տեղեկությունների համար:

Անվտանգություն

Անվտանգության բաժնում ներառված են հիմնական նախազգուշական միջոցները: Բացի այդ, այս բաժնում բերված են մեքենայում օգտագործված նախազգուշացնող նշանների ու պիտակների բովանդակությունը ու տեղադրությունը:

Շահագործում

Շահագործման բաժինը նախատեսված է նոր մեքենավարին իրազեկելու և փորձված մեքենավարի հմտությունները թարմացնելու համար: Այս բաժինը ներառում է չափիչների, անջատիչների, մեքենայի ու կցորդների կառավարման տարրերի, տեղափոխման ու քարշակման առանձնահատկությունների նկարագրություն:

Լուսանկարներն ու պատկերները մեքենավարի համար կծառայեն որպես ուղեցույց՝ մեքենայի ստուգման, գործարկման, շահագործման և ապագործարկման ընթացակարգերի ճշտությունն ապահովելու համար:

Այս հրատարակումը նկարագրում է միայն հիմնական աշխատանքային գործողությունները: Հմտություններն ու վարպետությունը զարգանում են մեքենայի և նրա կարողությունների մասին մեքենավարի գիտելիքների ավելացմանը զուգընթաց:

Սպասարկում

Սպասարկման բաժինը սարքավորումների խնամքի ուղեցույց է հանդիսանում:

Անվտանգության բաժին

i07743797

Անվտանգության նշաններ և պիտակներ


SMCS ծածկագիր՝ 7606

ՆԱԽԱԶԳՐՈՒՇԱՑՈՒՄ

Մի գործարկեք կամ սպասարկեք այս մեքենան, քանի դեռ չեք ընթերցել և յուրացրել Շահագործման և Սպասարկման ձեռնարկներում տրված հրահանգներն ու Նախազգուշացումները: Հրահանգներին չհետևելն ու Նախազգուշացումներն անտեսելը կարող է հանգեցնել մարմնական վնասվածքի կամ մահվան: Նոր ձեռնարկների համար դիմեք Cat-ի տեղական ներկայացուցչին: Պատշաճ խնամքի ապահովումը Ձեր պարտականությունն է:

Անվտանգության ուղերձներ

1 պատկերում ներկայացված Նախազգուշացման թաղանթը գտնվում է սարքավահանակի վրա: Մեքենայի բնականոն շահագործման պայմաններում Նախազգուշացման թաղանթը միշտ գտնվում է մեքենավարի տեսադաշտում:



Պատկեր 1
Թաղանթ

g01370917

ՆԱԽԱԶԳՐՈՒՇԱՑՈՒՄ

Այս մեքենայում տեղադրված է Caterpillar Product Link հաղորդիչ սարք: Էլեկտրական պայթուցիչների կիրառման դեպքում այս հաղորդիչ սարքն անհրաժեշտ է ապագործարկել պայթյունի վայրից 12 m (40 ft) կամ համապատասխան օրենսդրությամբ սահմանված այլ հեռավորության վրա: Այս պայմանի անտեսումը կարող է խաթարել պայթեցման աշխատանքների ընթացքը և հանգեցնել մարմնական լուրջ վնասվածքների կամ մահվան:

Պայթեցման աշխատանքների իրականացման վայր է համարվում բեռնման ժամանակ պայթուցիչ կյուբերի կիրառման տարածքը: Այն ներառում է պայթանցքերով ձևավորված պարագիծը:

Մեքենան պայթեցման աշխատանքների վայրում կամ դրա մերձակայքում շահագործելու անհրաժեշտության դեպքում մեքենավարը պետք է ապագործարկի Product Link սարքը: Սա նշանակում է, որ PL121 կամ PL522 / PL523 համակարգը պետք է գտնվի ապագործարկված վիճակում: PL121 կամ PL522 / PL523 համակարգն առաջարկվում է ապագործարկել հետևյալ եղանակներից մեկով.

- Մեքենայի խցիկում տեղադրեք Product Link համակարգի անջատիչ: Այդ անջատիչը թույլ կտա ԱՆՁԱՏԵԼ PL121 կամ PL522 / PL523 համակարգի բլոկը: Մանրամասների և տեղադրման հրահանգների համար տես Հատուկ հրահանգ, REHS2365, Installation Guide for the Product Link PL121 and PL321 կամ Հատուկ հրահանգ, REHS2368, Installation Procedure For Product Link PL522 and PL523 (Cellular):
- Պայթեցման աշխատանքների վայրի համար Նախատեսված անջատիչի ԱՆՁԱՏՎԱԾ դիրքի պայմաններում PL121 կամ PL522 / PL523 համակարգն աշխատանքային ժամաչափի ցուցմունքը կամ VIMS համակարգի տվյալները ստանալ չի կարող: Product Link համակարգի էլեկտրասնուցումը վերականգնելուց հետո աշխատանքային ժամաչափն անհրաժեշտ կլինի կարգավորել: Հարցերի առկայության դեպքում դիմեք Cat-ի տեղական ներկայացուցչին:

- PL121 կամ PL522 / PL523 համակարգի բլոկն անջատեք էլեկտրասնուցման հիմնական աղբյուրից: Այս գործողությունը կատարվում է լարերի կեմը Product Link-ի բլոկից անջատելու եղանակով:

Այլ թաղանթներ

2 պատկերում ներկայացված նախազգուշացման թաղանթը գտնվում է լավ տեսանելի տեղում: Մեքենայի բնականոն շահագործման պայմաններում պարզ տեսանելի տեղ է սարքավահանակը:



Պատկեր 2

g01787075

2 պատկերում ներկայացված նախազգուշացման թաղանթը նախատեսված է մեքենայում անլար հաղորդիչի առկայության մասին տեղեկացնելու համար: Մեքենայի տվյալները և նրա վիճակի ու շահագործման մասին տեղեկությունները հաղորդվում են Product Link սարքի միջոցով: Տեղեկությունները հաղորդվում են Caterpillar-ին և/կամ Cat-ի ներկայացուցիչներին՝ հաճախորդների սպասարկումը բարելավելու և Cat-ի արտադրանքներն ու ծառայությունները կատարելագործելու նպատակով: Product Link սարքերի միջոցով տեղեկությունների հաղորդումը ենթակա է տվյալ տարածաշրջանում գործող օրենսդրական պահանջներին:

Լրացուցիչ տեղեկությունների համար տես Շահագործման և սպասարկման ձեռնարկ, SEBU8142, Operation և Շահագործման և սպասարկման ձեռնարկ, SEBU8142, Regulatory Compliance Section:

i07743796

Ընդհանուր տեղեկություններ վտանգների մասին

SMCS ծածկագիր՝ 7606



Մի գործարկեք կամ սպասարկեք այս մեքենան, քանի դեռ չեք ընթերցել և յուրացրել Շահագործման և Սպասարկման ձեռնարկներում տրված հրահանգներն ու նախազգուշացումները: Հրահանգներին չիտուելն ու նախազգուշացումներն անտեսելը կարող է հանգեցնել մարմնական վնասվածքի կամ մահվան: Նոր ձեռնարկների համար դիմեք Cat-ի տեղական ներկայացուցչին: Պատշաճ խնամքի ապահովումը Ձեր պարտականությունն է:

Նախաբան

Այս փաստաթուղթը մեքենայի Շահագործման և սպասարկման ձեռնարկի հավելված է: Այս փաստաթուղթը մշտապես պահպանեք մեքենայի Շահագործման և սպասարկման ձեռնարկին կից:

Ներածություն

Այս փաստաթղթում ներկայացված են հետևյալի շահագործման մասին տեղեկությունները.

- Product Link PL121 / PL321 համակարգեր
- Product Link PL522 / PL523 համակարգեր

Մեքենայի շահագործումը և սպասարկումը թույլատրվում է միայն Շահագործման և սպասարկման ձեռնարկում ներկայացված հրահանգներն ու նախազգուշացումներն ընթերցելուց և յուրացնելուց հետո: Այս փաստաթղթի բովանդակությունն անհրաժեշտ է յուրացնել նախքան հետևյալից որևէ մեկով սարքավորված մեքենան շահագործելը.

- Product Link PL121 / PL321 համակարգեր
- Product Link PL522 / PL523 համակարգեր

Կանոնակարգային համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ

Ռադիոհաճախականային բաղադրիչներ

i07743794

Product Link (PL522 և PL523 - առկայության դեպքում)

SMCS ծածկագիր՝ 7490; 7606

S/N: PL51-Up

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Cat Product Link հաղորդիչ սարքի օգնությամբ տեղեկությունների հաղորդումը կարգավորվում է օրենսդրությամբ: Օրենսդրական պահանջները կարող են տարբեր լինել ըստ տարածաշրջանների՝ ի թիվս այլոց ներառելով ռադիոհաղորդման հաճախականությունների օգտագործման թույլտվությունը: Cat Product Link հաղորդիչ սարքի կիրառումը պետք է սահմանափակվի այն վայրերով, որտեղ այն բավարարում է Cat Product Link հաղորդիչ սարքի և հեռահաղորդակցության ցանցի օգտագործմանն առնչվող բոլոր օրենսդրական պահանջները:

Եթե Cat Product Link հաղորդիչ սարքով օժտված մեքենան գտնվում է այնպիսի վայրում կամ տեղափոխվում այնպիսի վայր, որտեղ (i) այն չի բավարարում օրենսդրական պահանջները կամ (ii) որտեղ նման տեղեկությունները մեկ վայրից մյուսը հեռարձակելը կամ մշակելն անօրինական է, Caterpillar-ը նման անհամապատասխանության համար որևէ պատասխանատվություն չի ստանձնում, և Caterpillar-ը կարող է դադարեցնել տվյալ սարքից տեղեկությունների հեռարձակումը:

Տվյալ երկրում Product Link համակարգի աշխատանքի վերաբերյալ հարցերի առկայության դեպքում դիմեք Cat -ի տեղական ներկայացուցչին:

Հղում. Լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք Ձեր արտադրանքի Շահագործման և սպասարկման ձեռնարկը:

Բնութագրեր



Այս մեքենան սարքավորված է Cat® Product Link հաղորդիչ սարքով: Պայթեցման աշխատանքներում Էլեկտրական պայթուցիչների կիրառման դեպքում ռադիոհաճախականություններով աշխատող սարքերը կարող են խանգարել նման պայթուցիչների աշխատանքը, ինչը կարող է հանգեցնել ծանր մարմնական վնասվածքի կամ մահվան: Product Link հաղորդիչ սարքն անհրաժեշտ է ապագործարկել պետական կամ տեղական կիրառելի բոլոր կանոնակարգային պահանջներով նախատեսված տարածության սահմաններում: Կանոնակարգային պահանջների բացակայության դեպքում Caterpillar-ը շահագործողին խորհուրդ է տալիս ինքնուրույն գնահատել ռիսկը և որոշել շահագործման համար անվտանգ հեռավորությունը:

Cat Product Link հաղորդիչ սարքի հետևյալ բնութագրերը ներկայացված են բոլոր հնարավոր վտանգների գնահատմանն օժանդակելու և տեղական բոլոր կանոնակարգերին համապատասխանությունն ապահովելու նպատակով.

Աղյուսակ 1

Ռադիոհաղորդիչի բնութագրերը		
Մոդելը	Հաղորդիչի հաճախականային ընդգրկույթը	Հաղորդիչի հզորությունը
PL522 և PL523	824 ՄՅգ - 849 ՄՅգ	0,5 Վտ բնորոշ 2 Վտ առավելագույն
	880 ՄՅգ - 915 ՄՅգ	
	1710 ՄՅգ - 1755 ՄՅգ	
	1850 ՄՅգ - 1910 ՄՅգ	

Աղյուսակ 2

Աշխատանքային լարումը և Էներգասպառումը		
Մոդելը	Լարման ընդգրկույթը	Յոսանքի սպառման առավելագույն ընդգրկույթը
PL522 և PL523	9-32 Վ	850 սԱ - 225 սԱ

Վկայագրման վերաբերյալ ծանուցում

Կանադայի տարածքում գտնվող օգտագործողների ծանուցում

Այս սարքը համապատասխանում է չվկայագրվող ռադիոսարքերի համար Կանադայի արդյունաբերության նախարարության կողմից սահմանված չափորոշիչներին: Շահագործումը ենթակա է հետևյալ երկու պայմաններին.

- Այս սարքը չպետք է խանգարումներ հարուցի:
- Այս սարքը պետք է դիմանա ընդունվող ցանկացած խանգարումներին՝ ներառյալ սարքի անցանկալի գործողություն հարուցելու ունակ խանգարումները:

FCC-ի (Յեռահաղորդակցության դաշնային հանձնաժողով, Federal Communications Commission) ծանուցումը

Այս սարքը համապատասխանում է FCC-ի կանոնների մաս 15-ին: Շահագործումը ենթակա է հետևյալ երկու պայմաններին.

- Այս սարքը չպետք է վնասակար խանգարումներ հարուցի:
- Այս սարքը պետք է դիմանա ընդունվող ցանկացած խանգարումներին՝ ներառյալ անցանկալի գործողություն հարուցելու ունակ խանգարումները:

Այս սարքը փորձարկվել և համապատասխան է համարվել FCC-ի կանոնների մաս 22-ին և մաս 24-ին, ինչպես նաև B դասի թվային սարքի համար նախատեսված սահմանաչափերին՝ ըստ FCC-ի կանոնների մաս 15-ի: Այդ սահմանաչափերը նախատեսված են բնակելի տարածքներում վնասակար խանգարումներից բավարար պաշտպանություն ապահովելու համար: Այս սարքն առաջացնում, օգտագործում և կարող է արձակել ռադիոհաճախականային էներգիա և ցուցումներին համապատասխան չտեղադրվելու և չօգտագործվելու դեպքում կարող է ռադիոկապի համար վնասակար խանգարումներ հարուցել: Այդուհանդերձ, չի երաշխավորվում, որ որոշակի տարածքներում խանգարումներ չեն առաջանա: Եթե այս սարքը խանգարում է ռադիոազդանշանների կամ հեռուստատեսային ազդանշանների ընդունմանը, ինչը կարելի է պարզել սարքն անջատելու և միացնելու եղանակով, ապա օգտատիրոջը խորհուրդ է տրվում փորձել վերացնել խանգարումները հետևյալ գործողություններից մեկի կամ մի քանիսի օգնությամբ.

- Փոխեք ընդունիչ ավեհավաքի դիրքը կամ տեղը:
- Մեծացրեք հեռավորությունը սարքի և ընդունիչի միջև:
- Սարքը և ընդունիչը միացրեք տարբեր շղթաներով սնուցվող ելքերի:
- Օգնության համար դիմեք տեղական ներկայացուցչին կամ ռադիոկապի/ հեռուստատեսության փորձառու մասնագետի:

Այս սարքն առանց Caterpillar -ի բացահայտ թույլտվության փոփոխելը կամ ձևափոխելը կարող է անվավեր դարձնել օգտագործողի կողմից այս սարքի օգտագործման իրավունքը:

Համապատասխանության հայտարարագիրը - Եվրոպական Միություն

Աղյուսակ 3

CATERPILLAR®

ԵՄ համապատասխանության հայտարարագիր

Սույն Համապատասխանության հայտարարագիրը թողարկված է արտադրողի միանձնյա պատասխանատվության ներքո:

Ներքոստորագրյալը, որը ներկայացնում է արտադրողին՝

Caterpillar Inc.

100 N.E. Adams Street

Peoria, IL 61629

USA

սույնով հայտարարում է, որ այս նկարագրության առարկան հանդիսացող
 արտադրանքը՝

Ռադիոհաղորդիչ արտադրանք 500, բջջային ռադիոկապով հեռահաղորդակցության սարք

Ապրանքանիշը՝ Caterpillar

Մոդելը՝ ռադիոհաղորդիչ
 արտադրանք 500 (Cat 522 և Cat
 523)

Ալեհավաքի մասացանկային համարը՝
 346-9376

Մասացանկային համարը՝ 351 - 8490 և 351 - 8492

համապատասխանում է Միության՝ ներդաշնակեցումը կանոնակարգող
 օրենսդրությանը.

Հանձնարարական 2014/53/EU

Հանձնարարական 2011/65/EU

Համապատասխանությունը հաստատվում է հետևյալ փաստաթղթերի կիրառելի պահանջների բավարարմամբ.

Համապատասխանության գնահատման ընթացակարգ՝ X Հավելված II, _____ Հավելված III, _____ Հավելված IV

2014/53/EU՝

LVD (Sec 3.1a)՝

EN60950-1:2006+A11:2009+A1:2010+A12:2011
 +A2:2013

EN 62311:2008

EMC (Sec 3.1b)՝

EN 301 489-1 V2.2.0

EN 301 489-3 V2.1.1

EN 301 489-19 V2.1.0

EN 301 489-52 V1.1.0

RF (Sec 3.2)

EN 301 511 V12.5.1

EN 300 440 V2.1.1

2011/65/EU՝

RoHS

EN 50581:2012

Signature: *Michael Caruthers*

Name: *Michael Caruthers*

Place: *Peoria, IL*

Title: *Engineering Manager*

Date: *7 Sept 2017*

i08350945

Product Link (PL121SR - առկայության դեպքում)

SMCS ծածկագիր՝ 7490; 7606

S/N: PL11-Up

S/N: FDB1-Up

S/N: W1B1-Up

S/N: W1C1-Up

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ


Cat Product Link հաղորդիչ սարքի օգնությամբ տեղեկությունների հաղորդումը կարգավորվում է օրենսդրական պահանջներով: Օրենսդրական պահանջները կարող են տարբեր լինել ըստ տարածաշրջանների՝ ի թիվս այլոց ներառելով ռադիոհաղորդման հաճախականությունների օգտագործման թույլտվությունը: Cat Product Link հաղորդիչ սարքի կիրառումը պետք է սահմանափակվի այն վայրերով, որտեղ այն բավարարում է Cat Product Link հաղորդիչ սարքի և հեռահաղորդակցության ցանցի օգտագործմանն առնչվող բոլոր օրենսդրական պահանջները:

Եթե Cat Product Link հաղորդիչ սարքով մեքենան գտնվում է այնպիսի վայրում կամ տեղափոխվում այնպիսի վայր, որտեղ (i) այն չի բավարարում օրենսդրական պահանջները կամ (ii) որտեղ նման տեղեկությունները մեկ վայրից մյուսը հեռարձակելը կամ մշակելն արգելված է օրենքով, ապա Caterpillar-ը նման անհամապատասխանության համար որևէ պատասխանատվություն չի ստանձնում, ուստի Caterpillar-ը կարող է դադարեցնել տվյալ սարքից տեղեկությունների հեռարձակումը:

Տվյալ երկրում Product Link համակարգի աշխատանքի վերաբերյալ հարցերի առկայության դեպքում դիմեք Cat -ի տեղական ներկայացուցչին:

Չորհմ. Լրացուցիչ տեղեկությունների համար ընթերցեք Ձեր արտադրանքի Շահագործման և սպասարկման ձեռնարկը:

Բնութագրեր



Այս մեքենան սարքավորված է Cat® Product Link հաղորդիչ սարքով: Պայթեցման աշխատանքներում Էլեկտրական պայթուցիչների կիրառման դեպքում ռադիոհաճախականություններով աշխատող սարքերը կարող են խանգարել նման պայթուցիչների աշխատանքը, ինչը կարող է հանգեցնել ծանր մարմնական վնասվածքի կամ մահվան: Product Link հաղորդիչ սարքն անհրաժեշտ է ապագործարկել պետական կամ տեղական կիրառելի բոլոր կանոնակարգային պահանջներով նախատեսված տարածության սահմաններում: Կանոնակարգային պահանջների բացակայության դեպքում Caterpillar-ը շահագործողին խորհուրդ է տալիս ինքնուրույն գնահատել ռիսկը և որոշել շահագործման համար անվտանգ հեռավորությունը:

Cat Product Link հաղորդիչ սարքի հետևյալ բնութագրերը ներկայացված են բոլոր հնարավոր վտանգների գնահատմանն օժանդակելու և տեղական բոլոր կանոնակարգերին համապատասխանությունն ապահովելու նպատակով.

Աղյուսակ 4

Ռադիոհաղորդիչի բնութագրերը		
Մոդելը	Չափողիչի հաճախականային ընդգրկույթը	Չափողիչի հզորությունը
PL121SR	148 ՄՀց - 150 ՄՀց	5 Վտ բնորոշ 10 Վտ առավելագույն

Վկայագրման վերաբերյալ ծանուցումներ

Կանադայի տարածքում գտնվող շահագործողների ծանուցումը

Կանադայի արդյունաբերության նախարարությունն օգտագործողներին ծանուցում է հետևյալի մասին.

Այս սարքը համապատասխանում է չվկայագրվող ռադիոսարքերի համար Կանադայի արդյունաբերության նախարարության կողմից սահմանված չափորոշիչներին: Շահագործումը ենթակա է հետևյալ երկու պայմաններին.

- Այս սարքը չպետք է խանգարումներ հարուցի:
- Այս սարքը պետք է դիմանա ընդունվող ցանկացած խանգարումներին՝ ներառյալ սարքի անցանկալի գործողություն հարուցելու ունակ խանգարումները:
- Կանադայի արդյունաբերության նախարարության կողմից թույլատրվել է այս ռադիոհաղորդիչն ավեհավաքի ստորև թվարկված տեսակներով շահագործել նշված առավելագույն թույլատրելի ուժեղացմամբ: Այս ցանկում չներառված և տվյալ տեսակի համար նախատեսված առավելագույն ուժեղացման մեծությունը գերազանցող ավեհավաքների շահագործումն այս սարքի հետ խստիվ արգելվում է:
- Այս սարքը նախատեսված է ստորև թվարկված, 3 դԲի առավելագույն ուժեղացմամբ ավեհավաք (ներ)ով շահագործման համար: Այս ցանկում չներառված կամ ուժեղացման 2, 14 դԲի մեծությունը գերազանցող ավեհավաքների շահագործումն այս սարքի հետ խստիվ արգելվում է: Ավեհավաքի պահանջվող մուտքային դիմադրությունը կազմում է 50 Օհմ:

Կիրառվող ավեհավաքները.

- 351-8485 ավեհավաք կարծր հենարանով:

FCC-ի (Հաղորդակցությունների դաշնային հանձնաժողովի) ծանուցումը

Այս սարքը համապատասխանում է FCC-ի կանոնների Մաս 15-ին: Շահագործումը ենթակա է հետևյալ երկու պայմաններին.

- Այս սարքը չպետք է խանգարումներ հարուցի:
- Այս սարքը պետք է դիմանա ընդունվող ցանկացած խանգարումներին՝ ներառյալ անցանկալի գործողություն հարուցելու ունակ խանգարումները:

Այս սարքը փորձարկվել է և համապատասխան համարվել B դասի թվային սարքի համար նախատեսված սահմանաչափերին՝ FCC-ի կանոնների Մաս 15-ի համաձայն: Այդ սահմանաչափերը նախատեսված են բնակելի տարածքներում վնասակար խանգարումներից բավարար պաշտպանություն ապահովելու համար: Այս սարքն առաջացնում, կիրառում և կարող է ճառագայթել ռադիոհաճախականային էներգիա: Հրահանգներին համապատասխան չտեղադրվելու և չօգտագործվելու դեպքում սարքը կարող է ռադիոկապի խանգարումներ հարուցել: Այդուհանդերձ չի երաշխավորվում, որ որոշակի տարածքներում խանգարումներ չեն առաջանա: Ռադիոազդանշանների կամ հեռուստաազդանշանների խանգարման առկայությունը կարելի է պարզել սարքն անջատելու և միացնելու եղանակով:

- Փոխեք ընդունիչ ավեհավաքի դիրքը կամ տեղադրությունը:
- Մեծացրեք հեռավորությունը սարքի և ընդունիչի միջև:
- Սարքը և ընդունիչը միացրեք տարբեր շղթաներով սնուցվող ելքերի:
- Օգնության համար դիմեք ներկայացուցչին կամ ռադիոկապի/հեռուստատեսության փորձառու մասնագետի:

Այս սարքն առանց Caterpillar -ի հատուկ թույլտվության փոփոխելը կամ ձևափոխելը կարող է անվավեր դարձնել օգտագործողի՝ սարքն օգտագործելու լիազորությունը:

Համապատասխանության հայտարարագիրը - Եվրոպական Միություն

Աղյուսակ 5

CATERPILLAR®

ԵՄ համապատասխանության հայտարարագիր

Սույն հայտարարագիրը տրվել է արտադրողի միանձնյա պատասխանատվությամբ:

Ներքոստորագրյալը, որը ներկայացնում է արտադրողին՝

CATERPILLAR INC
100 N.E. Adams Street
Peoria, IL 61629
309-578-9220
USA

սույնով հայտարարում է, որ այս նկարագրության առարկան
հանդիսացող արտադրանքը՝

Product Link, PL121, արբանյակային ռադիոկապով
հեռահաղորդակցության սարք

Ապրանքանիշը՝ Caterpillar Մոդելը՝ PL121SR

Մասացանկային համարը՝ 336 - 3545

Ալեհավաքի մասացանկային համարը՝
351-8485

համապատասխանում է Միության՝ ներդաշնակեցումը կանոնակարգող օրենսդրությանը.

Հանձնարարական 2014/53/EU

Հանձնարարական 2011/65/EU

Համապատասխանությունը հաստատվում է հետևյալ փաստաթղթերի կիրառելի պահանջների բավարարմամբ.

Համապատասխանության գնահատման ընթացակարգ՝ X Հավելված II, Հավելված III, Հավելված IV

2014/53/EU:	LVD (Sec 3.1a):	EN 62368-1:2014 EN 62311:2008	
	EMC (Sec 3.1b):	EN 301 489-1 V2.1.1 EN 301 489-19 V2.1.0 EN 301 489-20 V2.1.0	
		RF (Sec 3.2)	EN 301 721 V2.1.1 EN 303 413 V1.1.1
		2011/65/EU:	RoHS EN 50581:2012

Signature: 

Name: Michael Caruthers

Place: Peoria, IL

Title: Product Manager

Date: 07oct2020

Շահագործման բաժին

Շահագործում

i08035071

Product Link

SMCS ծածկագիր՝ 7606

Ծանոթություն. Ձեր մեքենան կարող է սարքավորված լինել Cat® Product Link™ համակարգով:

Cat Product Link հաղորդիչ սարքը մեքենայի մասին տեղեկություններ է հաղորդում բջջային և/կամ արբանյակային կապի տեխնոլոգիայի միջոցով: Այդ տեղեկությունները փոխանցվում են Caterpillar-ին, Cat-ի ներկայացուցիչներին և Caterpillar-ի հաճախորդներին: Cat Product Link հաղորդիչ սարքը գործում է Գլոբալ դիրքորոշման համակարգի (GPS) արբանյակային ընդունիչների միջոցով:

Cat Product Link հաղորդիչ սարքը նախատեսվում է մեքենայի և հեռակա օգտագործողի միջև երկկողմ հաղորդակցության հնարավորություն: Հեռակա օգտագործող կարող է հանդիսանալ ներկայացուցիչը կամ հաճախորդը:

Տվյալների հեռարձակումը

Այս մեքենայի, նրա վիճակին և շահագործմանը վերաբերող տվյալները Cat Product Link սարքի միջոցով հեռարձակվում են Caterpillar -ին և/կամ Cat -ի ներկայացուցիչներին: Տվյալներն օգտագործվում են հաճախորդների սպասարկումը բարելավելու և Cat -ի արտադրանքներն ու ծառայությունները կատարելագործելու նպատակով: Հեռարձակվող տվյալները կարող են ներառել մեքենայի սերիական համարը, մեքենայի գտնվելու վայրը և աշխատանքային տվյալները, այդ թվում՝ խափանման ծածկագրերը, արտանետումների ու վառելիքի ծախսի տվյալները, աշխատաժամերի հաշվիչի ցուցմունքը, ծրագրաշարի և սարքաշարի վարկածների համարները, տեղադրված կցորդները և այլն:

Caterpillar -ը և/կամ Cat -ի ներկայացուցիչներն այս տեղեկությունները կարող են օգտագործել տարբեր նպատակներով: Հնարավոր կիրառություններին ծանոթանալու համար տես հետևյալ ցանկը.

- Հաճախորդի և/կամ մեքենայի սպասարկում
- Cat Product Link սարքավորման ստուգում կամ տեխսպասարկում

- Մեքենայի վիճակի կամ նրա աշխատանքի հսկողություն
- Մեքենայի սպասարկման և/կամ նրա արդյունավետության բարձրացման գծով աջակցություն
- Cat արտադրանքների և ծառայությունների գնահատում կամ կատարելագործում
- Օրենսդրական պահանջների և դատական գործող վճիռների կատարում
- Շուկայի ուսումնասիրություն
- Հաճախորդներին նոր արտադրատեսակներ ու ծառայությունների առաջարկ

Caterpillar -ը կարող է հավաքագրված տեղեկությունները մասամբ կամ ամբողջությամբ տրամադրել Caterpillar -ի դուստր ընկերություններին, տեղական ներկայացուցիչներին և լիազորված ներկայացուցիչներին: Caterpillar -ը հավաքագրված տեղեկությունները չի վաճառի կամ վարձույթով չի տրամադրի որևէ երրորդ անձի և ողջամիտ միջոցներ կձեռնարկի այդ տեղեկությունների պահպանությունն ապահովելու նպատակով: Caterpillar -ը ճանաչում և հարգում է հաճախորդների գաղտնիության իրավունքը: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել Cat -ի տեղական ներկայացուցչին:

Product Link-ի ռադիոհաղորդիչների շահագործումը պայթեցման աշխատանքների վայրում



ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Այս մեքենան սարքավորված է Cat® Product Link հաղորդիչ սարքով: Պայթեցման աշխատանքներում էլեկտրական պայթուցիչների կիրառման դեպքում ռադիոհաճախականություններով աշխատող սարքերը կարող են խանգարել նման պայթուցիչների աշխատանքը, ինչը կարող է հանգեցնել ծանր մարմնական վնասվածքի կամ մահվան: Product Link հաղորդիչ սարքն անհրաժեշտ է ապագործարկել պետական կամ տեղական կիրառելի բոլոր կանոնակարգային պահանջներով նախատեսված տարածության սահմաններում: Կանոնակարգային պահանջների բացակայության դեպքում Caterpillar-ը շահագործողին խորհուրդ է տալիս ինքնուրույն գնահատել ռիսկը և որոշել շահագործման համար անվտանգ հեռավորությունը:

Լրացուցիչ տեղեկությունների համար տես տվյալ արտադրանքի Շահագործման և սպասարկման ձեռնարկի հավելված, Կանոնակարգային համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ:

Cat Product Link հաղորդիչ սարքն ապագործարկելու եղանակների մասին տեղեկությունների համար խնդրում ենք հետևյալից ընտրել Ձեր Cat Product Link սարքի ձեռնարկը.

- Operation and Maintenance Manual, SEBU8142, Product Link - PL121, PL321, PL522, and PL523
- Operation and Maintenance Manual, SEBU8832, Product Link PLE702, PLE602, PLE601, PL641, PL631, PL542, PL240, PL241, PL243, PL141, PL131, PL161, PL083 and PL042 Systems

Ծանոթություն. Ռադիոկապի ապագործարկման անջատիչով չսարքավորված մեքենան պայթեցման աշխատանքների վայրի մերձակայքում շահագործելու անհրաժեշտության դեպքում Product Link-ի ռադիոկապի ապագործարկման անջատիչի տեղադրումը թույլատրելի է: Այդ անջատիչը մեքենավարին կընձեռնի Cat Product Link հաղորդիչ սարքը մեքենայի կառավարման սարքավահանակի միջոցով ապագործարկելու հնարավորություն: Լրացուցիչ մանրամասները և տեղադրման ընթացակարգերը տես հետևյալ հրապարակումներում.

- Հասուն կիրառանք, REHS7339, Installation Procedure for Product Link և PLE640 Systems
- Հասուն կիրառանք, REHS8850, Installation Procedure for the Elite Product Link PLE601, PLE641, and PLE631 Systems
- Special Instruction, SEHS0377, Installation Procedure for the Product Link PL131, PL141, and PL161 Systems
- Հասուն կիրառանք, REHS9111, Installation Procedure for the Pro Product Link PL641, and PL631 Systems
- Հասուն կիրառանք, M0098124, Installation Procedure for Pro Product Link PL243 Systems
- Հասուն կիրառանք, M0109130, Installation Procedure for Product Link PL683, and PL783 Systems

Այբբենական ցանկ

Անվտանգության բաժին.....	6
Անվտանգության նշաններ և պիտակներ	6
Այլ թաղանթներ.....	7
Անվտանգության ուղերձներ.....	6
Անվտանգության վերաբերյալ կարևոր տեղեկություններ	2
Բովանդակություն.....	4
Ընդհանուր տեղեկություններ	
վտանգների մասին.....	7
Նախաբան	7
Ներածություն	7
Կանոնակարգային	
համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ	8
Նախաբան	5
Անվտանգություն.....	5
Շահագործում.....	5
Սպասարկում.....	5
Տեղեկատու գրականություն.....	5
Շահագործման բաժին.....	14
Շահագործում	14
Ռադիոհաճախականային բաղադրիչներ	8
Product Link	14
Տվյալների հեռարձակումը	14
Product Link-ի ռադիոհաղորդիչների շահագործումը պայթեցման աշխատանքների վայրում.....	15
Product Link (PL121SR - առկայության դեպքում).....	11
Բնութագրեր	11
Համապատասխանության հայտարագիրը - Եվրոպական Միություն	13
Վկայագրման վերաբերյալ ծանուցումներ	11
Product Link (PL522 և PL523 - առկայության դեպքում)	8
Բնութագրեր	8
Համապատասխանության հայտարագիրը - Եվրոպական Միություն	10
Վկայագրման վերաբերյալ ծանուցում.....	9

Տեղեկություններ արտադրանքի և ներկայացուցչի մասին

Ճանաչություն. Արտադրանքի նույնականացման վահանակի տեղադրության մասին տես Շահագործման ու սպասարկման ձեռնարկի «Արտադրանքի նույնականացման տվյալները» բաժնում:

Մատակարարման ամսաթիվը՝ _____

Արտադրանքի տվյալները

Մոդելը՝ _____

Արտադրանքի նույնականացման համարը՝ _____

Շարժիչի սերիական համարը՝ _____

Փոխհաղորդակի սերիական համարը՝ _____

Գեներատորի սերիական համարը՝ _____

Կցորդի սերիական համարները՝ _____

Կցորդի տվյալները՝ _____

Հաճախորդի սարքավորման համարը՝ _____

Ներկայացուցչի սարքավորման համարը՝ _____

Ներկայացուցչի տվյալները

Անվանումը՝ _____ Մասնաճյուղը՝ _____

Հասցեն՝ _____

Ներկայացուցչի մասնագետը

Հեռախոսահամարը

Աշխատանքային ժամերը

Վաճառքի գծով՝ _____

Պահեստ-ամասերի գծով՝ _____

Սպասար-
կման
գծով՝





S9BY8142
©2021 Caterpillar
Բոլոր իրավունքները
պահպանված են:

CAT, CATERPILLAR, LET'S DO THE WORK բառերը, դրանց համապատասխան
պատկերանշանները, «Caterpillar Corporate Yellow» գույնը, «Power Edge» և Cat «Modern
Hex» առևտրային ձևավորումը, ինչպես նաև սույն փաստաթղթում օգտագործված
կորպորատիվ և ապրանքային ինքնությունը Caterpillar ընկերության ապրանքանիշերն են
և առանց թույլտվության չեն կարող օգտագործվել: